

12/09/2006
համար 534 Ն

**«ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՐԱՆՑ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
07.08.07թ. թիվ 258 Ն, 08.09.09թ. թիվ 263-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Գրավատների և գրավատնային գործունեության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը և «Իրավական
ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը,
ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հաստատել «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից
ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը»՝ համաձայն
հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

S. Սարգսյան

Հավելված

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 534 Ն որոշման**

**ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ**

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանված է «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի համաձայն և կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գրավատների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման կարգը:

**ԳԼՈՒԽ II. ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2. Գրավատները Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների հետևյալ ձևերը՝ նշված պարբերականությամբ.

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	Վարկային միջոցների ընդհանուր ծավալի, տեղաբաշխված վարկերի, գրավի առարկաների և ի պահ ընդունված գույքի գնահատված արժեքի, ներգրավված միջոցների՝ յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ մնացորդի վերաբերյալ	1	ամսական
2	Տեղաբաշխված վարկերի և այլ ակտիվների, սեփական ու ներգրավված միջոցների և այլ պարտավորությունների, ինչպես նաև գրավի առարկաների վերաբերյալ	2	եռամսյակային

**ԳԼՈՒԽ III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

3. Գրավատնային գործունեություն իրականացնող անձինք սույն կարգով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում էլեկտրոնային տարբերակով՝ Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով, որոնք փոփոխելն արգելվում է: Հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները ներկայացվում են Կենտրոնական բանկ ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Սույն կետում

նշվածից բացի այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ ամսական և եռամսյակային հաշվետվություններում նշվում է ամսվա վերջին օրվա ամսաթիվը): Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/2006): Եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը համընկնում է գրավատան ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվությունների կազմման համար հիմք են ընդունվում այդ օրվան նախորդող վերջին աշխատանքային օրվա տվյալները:

Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:


4. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները հնարավոր է ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, և նրանք չունեն ծրագրային կամ տեխնիկական թերություններ: Սույն կետի պահանջը չի տարածվում գրավատների վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում: «Գրավատների և գրավատային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ զուգահեռաբար հաշվետվությունների փոփոխման (ճշգրտման) վերաբերյալ գրավոր տեղեկացնելով Կենտրոնական բանկի նախագահին: Դճգրտված հաշվետվության էլեկտրոնային տարբերակների և գրավոր տեղեկանքի առկայության դեպքում միայն փոփոխված հաշվետվությունները համարվում են Կենտրոնական բանկ ներկայացված:

5. Կենտրոնական բանկի գրավատների վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման համապատասխան վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական նպատակներից ելնելով՝ ծանուցման միջոցով գրավատներից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

Գրավատումը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ) ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկատվությունը ներկայացնել Կենտրոնական բանկ:

6. Հաշվետվությունները մագնիսական կրիչներով կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են:

Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է: Կենտրոնական բանկ ներկայացվող ֆայլերը, բացի տվյալ օրը ներկայացվող հաշվետվության ձևերից, այլ տեղեկատվություն չպետք է պարունակեն:

7. Հավելված 1-ի ձև թիվ 1 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կերպ.

Հաշվետվությունը կազմվում է օրվա վերջի դրությամբ գրավատանն առկա տվյալների համաձայն:

1-ին սյունակում լրացված է ամսվա հերթական օրը:

2-րդ սյունակում լրացվում է գրավատան տրամադրած վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների գնահատված արժեքի մնացորդը՝ օրվա վերջի դրությամբ (**Գ.օր.մն.**) (այդ թվում՝ նաև իրացման ենթակա գրավի առարկաների արժեքը), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Գ.օր.մն.} = \text{Գ.նախ.օր.մն.} + \text{Գ.ստ.օր} - \text{Գ.վեր.օր.}$$

որտեղ՝

Գ.նախ.օր.մն.-ը գրավատան կողմից տրամադրված վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների մնացորդն է՝ նախորդ օրվա վերջի դրությամբ:

Գ.ստ.օր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում տրամադրված վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների գնահատված արժեքն է:

Գ.վեր.օր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում մարված վարկերի դիմաց վերադարձված գրավի առարկաների և տվյալ օրվա ընթացքում վաճառված գրավի արժեքների հանրագումարն է:

3-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից տրամադրված վարկերի մնացորդը՝ տվյալ օրվա վերջի դրությամբ (**Վրկ.օր.մն.**), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Վրկ.օր.մն.} = \text{Վրկ.նախ.օր.մն.} + \text{Վրկ.օր.տր} - \text{Վրկ.օր.մար.}$$

որտեղ՝

Վրկ.նախ.օր.մն.-ը գրավատան կողմից տրամադրված ընդհանուր վարկերի մնացորդն է՝ նախորդ օրվա վերջի դրությամբ:

Վրկ.օր.տր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում տրամադրված վարկերի հանրագումարի չափն է:

Վրկ.օր.մար.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում կատարված վարկերի մարումների (ներառյալ՝ գրավի իրացման ճանապարհով մարված վարկերի, ինչպես նաև գրավատան կողմից ներված կամ զիջված վարկերի) հանրագումարն է:

4-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից ի պահ ընդունված արժեքների մնացորդը՝ օրվա վերջի դրությամբ (**Պ.օր.մն.**) (այդ թվում՝ նաև իրացման ենթակա ի պահ ընդունված արժեքները), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Պ.օր.մն.} = \text{Պ.նախ.օր.մն.} + \text{Պ.ստ.օր} - \text{Պ.վեր.օր.}$$

որտեղ՝

Պ.նախ.օր.մն.-ը գրավատան կողմից ի պահ ընդունված արժեքների մնացորդն է՝ նախորդ օրվա վերջի դրությամբ:

Պ.ստ.օր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում ի պահ ընդունված առարկաների արժեքն է:

Պ.վեր.օր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում վերադարձված և վաճառված ի պահ ընդունված արժեքների հանրագումարն է:

5-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից գրավ ընդունված գույքի և ի պահ ընդունված գույքի ապահովագրական գումարի չափը՝ տվյալ օրվա վերջի դրությամբ (բացառությամբ բեռնափոխադրումների ապահովագրության գումարի):

6-րդ սյունակում լրացվում է գրավատան դրամական միջոցների ընդհանուր գումարը՝ տվյալ օրվա վերջի դրությամբ, որը գրավատան կանխիկ դրամական միջոցների և բանկային հաշիվների հանրագումարն է:

7-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից ներգրավված դրամական միջոցների ընդհանուր գումարը՝ տվյալ օրվա վերջի դրությամբ:

Հաշվետվության մեջ դրամական միավորները արտահայտվում են հազար դրամով:

8. Հավելված 2-ի ձև թիվ 2 հաշվետվությունը բաղկացած է չորս էջից (ֆայլով՝ չորս շիթից), որոնք լրացվում են հետևյալ կերպ.

Հաշվետվության առաջին էջի աղյուսակը կազմվում է հաշվետու և նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ գրավատանն առկա տվյալների համաձայն:

Առաջին էջի աղյուսակի 4-րդ սյունակի.

1-ին տողում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գրավատան կողմից տրամադրված գործող վարկերի մնացորդները (գործող են համարվում բոլոր այն վարկերը որոնք մարված չեն, և որոնց ապահովվածություն հանդիսացող գրավը իրացված չէ):

1.1 տողում լրացվում են բոլոր երկարաձգված վարկերը, որոնք գործել են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

1.2 տողում լրացվում է գրավատան ժամկետանց վարկերի ընդհանուր գումարը՝ (ժամկետանց են համարվում բոլոր այն վարկերը, որոնք պայմանագրով սահմանված ժամկետում չեն մարվել կամ երկարաձգվել):

2-րդ տողում լրացվում են գրավատան կողմից տրամադրված վարկերի դիմաց հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները:

3-րդ տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գրավատան դրամարկղի մնացորդը:

4-րդ տողում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գրավատան բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդները:

5-րդ տողում լրացվում է գրավատան սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի հաշվեկշռային արժեքը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

6-րդ տողում լրացվում է գրավատան սեփականությունը հանդիսացող հիմնական միջոցների (բացառությամբ՝ անշարժ գույքի) հաշվեկշռային արժեքը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

7-րդ տողում լրացվում են գրավատան բոլոր այն ակտիվների գումարները, որոնք չեն ընդգրկվել 1, 1.1, 1.2, 2, 3, 4, 5 և 6 տողերում:

8-րդ տողում լրացվում է գրավատան և քաղաքացիների միջև կնքված այն վարկային պայմանագրերի թիվը, որոնք գործել են (այդ թվում՝ նաև ժամկետանց պայմանագրերը) հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

9-րդ տողում լրացվում են 9.1, 9.2 և 9.3 տողերի հանրագումարները:

9.1 տողում լրացվում է բանկերից և վարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների մնացորդների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

9.2 տողում լրացվում է գրավատան մասնակիցներից ներգրավված միջոցների մնացորդների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

9.3 տողում լրացվում է այլ կազմակերպություններից ներգրավված միջոցների մնացորդների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

Եթե գրավատուները միջոցներ է ներգրավել արտարժույթով, ապա հաշվետվությունում ներգրավված միջոցներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

10-րդ տողում լրացվում են գրավատան կողմից ներգրավված միջոցների դիմաց հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները:

11-րդ տողում լրացվում են գրավատան այն պարտավորությունները, որոնք չեն ընդգրկվել 9.1, 9.2 և 9.3 տողերում:

12-րդ տողում լրացվում է 12.1, 12.2, 12.3, 12.4 տողերի հանրագումարը:

12.1 տողում լրացվում է գրավատան կանոնադրական կապիտալի մեծությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

12.2 տողում լրացվում է գրավատան շահույթը (վնասը)՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ: Լրացվում է աճողական կարգով՝ ֆինանսական տարվա սկզբից:

12.3 տողում լրացվում է գրավատան պահուստային կապիտալի մեծությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

12.4 տողում լրացվում են սեփական կապիտալի այլ (որոնք չեն ընդգրկվել 12.1, 12.2 և 12.3 տողերի մեջ) տարրերը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

13-րդ տողում լրացվում է գրավատան կողմից տրամադրված վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների գնահատված ընդհանուր արժեքը (բացառությամբ՝ իրացման ենթակա գրավի արժեքի)՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (13.1 տող), փոխադրամիջոցների (13.2 տող), կենցաղային տեխնիկայի (13.3 տող) և այլ շարժական գույքի (13.4 տող) արժեքների հանրագումարը:

14-րդ տողում լրացվում է գրավատան կողմից ի պահ ընդունված գույքի ընդհանուր արժեքը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ (բացառությամբ՝ իրացման ենթակա ի պահ ընդունված գույքի ընդհանուր արժեքի), որը ներառում է՝ ոսկերչական իրերի (14.1 տող), փոխադրամիջոցների (14.2 տող), կենցաղային տեխնիկայի (14.3 տող) և այլ շարժական գույքի (14.4 տող) արժեքների հանրագումարը:

15-րդ տողում լրացվում է գրավատան իրացման ենթակա գրավի առարկաների գնահատված ընդհանուր արժեքը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (15.1 տող), փոխադրամիջոցների (15.2 տող), կենցաղային տեխնիկայի (15.3 տող) և այլ շարժական գույքի (15.4 տողի 4-րդ սյունակ) արժեքների հանրագումարը:

16-րդ տողում լրացվում է գրավատան իրացման ենթակա ի պահ ընդունված գույքի ընդհանուր արժեքը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (16.1 տող), փոխադրամիջոցների (16.2 տող), կենցաղային տեխնիկայի (16.3 տող) և այլ շարժական գույքի (16.4 տող) արժեքների հանրագումարը:

Հաշվետվության մեջ դրամական միավորները արտահայտվում են հազար դրամով:

Հաշվետվության երկրորդ էջի աղյուսակը կազմվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանի դրությամբ գրավատանն առկա տվյալների համաձայն:

Երկրորդ էջի աղյուսակի 4-րդ սյունակի.

1-ին տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գրավատան կողմից մեկ վարկային պայմանագրով տրամադրված առավելագույն վարկի գումարը՝ արտահայտված հազար դրամով:

2-րդ տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գրավատան կողմից մեկ վարկային պայմանագրով տրամադրված նվազագույն վարկի գումարը՝ արտահայտված հազար դրամով:

3-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված վարկերի առավելագույն տարեկան տոկոսադրույքը:

4-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված վարկերի նվազագույն տարեկան տոկոսադրույքը:

5-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված վարկերի առավելագույն պայմանագրային ժամկետը՝ արտահայտված օրերով (եթե հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել վարկային պայմանագրերի երկարաձգում, որոնց երկարաձգման ժամկետներն ավելի երկար են, քան տվյալ պահին գործող առավելագույն ժամկետով պայմանագիրը, ապա լրացվում է երկարաձգված վարկի ժամկետը):

6-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված վարկերի նվազագույն պայմանագրային ժամկետը՝ արտահայտված օրերով:

7-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ներգրավված դրամական միջոցների առավելագույն տարեկան տոկոսադրույքը:

8-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ներգրավված դրամական միջոցների նվազագույն տարեկան տոկոսադրույքը:

9-րդ տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գրավատան ներգրավված միջոցների առավելագույն ժամկետը՝ արտահայտված օրերով: Եթե գրավատունը միջոցները ներգրավվել է անժամկետ, ապա հաշվետվությունում լրացվում է «անժամկետ» բառը:

10-րդ տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գրավատան ներգրավված միջոցների նվազագույն ժամկետը՝ արտահայտված օրերով: Եթե գրավատունը միջոցները ներգրավվել է անժամկետ, ապա հաշվետվությունում լրացվում է «անժամկետ» բառը:

11-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գրավի առարկաների իրացումից ստացված հասույթը՝ արտահայտված հազար դրամով, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (11.1 տող), փոխադրամիջոցների (11.2 տող), կենցաղային տեխնիկայի (11.3 տող) և այլ շարժական գույքի (11.4 տող) իրացումից ստացված հասույթների հանրագումարը:

12-րդ տողում լրացվում է գրավի առարկաների իրացումից ստացված հասույթի և վարկերի (ներառյալ՝ տոկոսագումարները և տույժերը) մարմանն ուղղված գումարների դրական կամ բացասական տարբերությունը՝ արտահայտված հազար դրամով:

13-րդ տողում լրացվում են գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանում վարկերի դիմաց փաստացի ստացված տոկոսները, որոնք մուտքագրվել են դրամարկղ կամ բանկային հաշվին՝ արտահայտված հազար դրամով:

14-րդ տողում լրացվում են գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանում ներգրավված միջոցների դիմաց փաստացի վճարված տոկոսները, որոնք ելքագրվել են դրամարկղից կամ բանկային հաշվից՝ արտահայտված հազար դրամով:

9. Հաշվետվության երրորդ էջի աղյուսակը ներառում է հաշվետու ժամանակաշրջանում գրավատան կողմից վճարված և վճարման ենթակա հերթական տարեկան պետական տուրքի վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվությանը կից Կենտրոնական բանկ են ներկայացվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված հերթական տարեկան պետական տուրքի, ինչպես նաև, դրա վճարումն ուշացնելու համար վճարված տույժի (առկայության դեպքում) վճարումը հավաստող փաստաթղթերի (պետական տուրքի վճարման անդորրագիր, վճարման հանձնարարական և այլն) սքան արված տարբերակները:

Հաշվետվության երրորդ էջի աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

1. «Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը» սյունակում նշվում է գրավատնային գործունեության համար Կենտրոնական բանկի կողմից լիցենզիայի տրամադրման ամսաթիվը: Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր.ամիս.տարի (օրինակ՝ 15.04.2003):

2. «Վճարված պետական տուրքի գումարը» սյունակում նշվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հերթական տարեկան պետական տուրքի գծով վճարված գումարը (առանց տույժերի գումարի):

Այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանում գրավատունը կատարել է մեկից ավելի վճարումներ, դրանք պետք է արտացոլել առանձին տողերով, բացառությամբ նույն օրվա ընթացքում նույն ժամանակաշրջանի համար կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով:

3. «Շամկետանց օրերի համար վճարված տույժի չափը» սյունակում լրացվում է հերթական տարեկան պետական տուրքի վճարումը ՀՀ օրենսդրությամբ

սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար հաշվետու ժամանակաշրջանում վճարված տույժի չափը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գրավատան կողմից տույժերի գծով կատարված առանձին վճարումները պետք է արտացոլել առանձին տողերով (բացառությամբ նույն օրվա ընթացքում տույժերի գծով կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով)՝ յուրաքանչյուր վճարված տույժի համար լրացնելով միայն «Վճարման ամսաթիվը», «Հաշվի համարը» և «Ժամկետանց պարտավորության ամբողջ գումարը» սյունակները:

4. «Վճարման ամսաթիվը» սյունակում նշվում է հաշվետու ժամանակաշրջանում վճարված պետական տուրքի կամ տույժերի վճարման ամսաթիվը: Այն դեպքում, երբ պետական տուրքի և տույժերի վճարման ամսաթիվերը համընկնում են, այդ գումարները լրացվում են նույն տողի վրա, հակառակ դեպքում լրացվում են առանձին տողերով՝ յուրաքանչյուր վճարված գումարի համար նշելով համապատասխան վճարման ամսաթիվը: Վճարման ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր.ամիս.տարի (օրինակ՝ 15.04.2003):

5. «Ժամանակաշրջանը» սյունակում նշվում է այն ժամանակաշրջանի սկիզբը և վերջը, որի համար վճարվել է «Վճարված պետական տուրքի գումարը» սյունակում նշված գումարը: Ժամանակաշրջանի սկիզբը և վերջը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր.ամիս.տարի (օրինակ՝ 15.04.2003): Օրինակ, եթե գրավատնային գործունեության լիցենզիան ստացվել է 11.08.2003թ. և գրավատունը կատարել է հերթական տարեկան պետական տուրքի վճարում 01.07.2008թ.՝ հաջորդ տարվա համար, ապա «Ժամանակաշրջան» սյունակի «սկիզբ» մասում կնշվի՝ 11.08.2008, իսկ «վերջ» մասում՝ 11.08.2009: Այն դեպքում, երբ գրավատունը մեկ վճարումով իրականացնում է պետական տուրքի վճարում տարբեր ժամանակաշրջանների համար, ապա դրանք պետք է արտացոլել առանձին տողերով՝ վճարված գումարի յուրաքանչյուր մասի համար լրացնելով վճարման համապատասխան ժամանակաշրջանը:

6. «Հաշվի համարը» սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվի համարը, որին կատարվել է «Վճարված պետական տուրքի գումարը» և (կամ) «Ժամկետանց օրերի համար վճարված տույժի չափը» սյունակում նշված գումարների վճարումը:

7. «Ժամկետանց պարտավորության ամբողջ գումարը» սյունակում լրացվում է «Վճարման ամսաթիվը» սյունակում նշված օրվա վերջի դրությամբ տարեկան պետական տուրքի գծով վճարման ենթակա գումարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տույժերի հանրագումարը: «Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ» տողը լրացվում է միայն «Ժամկետանց պարտավորության ամբողջ գումարը» սյունակի համար, որտեղ նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պետական տուրքի գումարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տույժերի հանրագումարը:

10. Հաշվետվության չորրորդ էջի աղյուսակը ներառում է հաշվետու ժամանակաշրջանում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին վճարված և վճարման ենթակա պարտադիր վճարների վերաբերյալ տեղեկատվություն:

Հաշվետվության չորրորդ էջի աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ կերպ.

1. «Վճարված պարտադիր վճարի չափը» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում գրավատան կողմից վճարված

պարտադիր վճարները (առանց տոկոսագումարների): Հաշվետու ժամանակաշրջանում կատարված առանձին վճարումները պետք է արտացոլել առանձին տողերով, բացառությամբ նույն օրվա ընթացքում նույն ժամանակաշրջանին կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով:

2. «Ժամանակաշրջանը» սյունակում նշվում է տարվա այն եռամսյակը, որի համար վճարվել է «Վճարված պարտադիր վճարի չափը» սյունակում նշված գումարը: Եռամսյակը նշվում է հետևյալ ֆորմատով՝ եռամսյակ.տարի (օրինակ՝ 2.2003): Այն դեպքում, երբ գրավատունը մեկ վճարումով իրականացնում է պարտադիր վճարների մուծում տարբեր ժամանակաշրջանների (եռամսյակների) համար, ապա դրանք պետք է արտացոլել առանձին տողերով՝ վճարված պարտադիր վճարի յուրաքանչյուր մասի համար լրացնելով վճարման համապատասխան ժամանակաշրջանը:
3. «Վճարման ամսաթիվը» սյունակում նշվում է հաշվետու ժամանակաշրջանում վճարված պարտադիր վճարների կամ տոկոսագումարների վճարման ամսաթիվը: Այն դեպքում, երբ պարտադիր վճարների և տոկոսագումարների վճարման ամսաթիվերը համընկնում են, այդ գումարները լրացվում են նույն տողի վրա, հակառակ դեպքում լրացվում են առանձին տողերով՝ յուրաքանչյուր վճարված գումարի համար նշելով համապատասխան վճարման ամսաթիվը: Վճարման ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր.ամիս.տարի (օրինակ՝ 15.04.2003):
4. «Ժամկետանց օրերի համար հաշվեգրված տոկոսագումարների չափը» սյունակում նշվում է «Վճարման ամսաթիվը» սյունակում նշված օրվա սկզբի դրությամբ՝ ժամկետանց օրերի համար ՀՀ օրենսդրության համաձայն հաշվեգրված և չվճարված տոկոսագումարների չափը (առկայության դեպքում): Այն դեպքում, երբ «Վճարման ամսաթիվը» սյունակում առկա է նույն ամսաթիվն ունեցող մեկից ավելի տողեր, ապա «Ժամկետանց օրերի համար հաշվեգրված տոկոսագումարների չափը», «Ժամկետանց օրերի համար վճարված տոկոսագումարների չափը» և «Ժամկետանց պարտավորության ամբողջ գումարը» սյունակները լրացվում են միայն վերջին տողի համար:
5. «Ժամկետանց օրերի համար վճարված տոկոսագումարների չափը» սյունակում լրացվում է ժամկետանց օրերի համար հաշվեգրված տոկոսագումարների՝ հաշվետու ժամանակաշրջանում վճարված չափը: Հաշվետու ժամանակաշրջանում գրավատան կողմից տոկոսագումարների գծով կատարված առանձին վճարումները պետք է արտացոլել առանձին տողերով (բացառությամբ նույն օրվա ընթացքում կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով)՝ յուրաքանչյուր վճարված տոկոսագումարի համար լրացնելով միայն «Վճարման ամսաթիվը», «Ժամկետանց օրերի համար հաշվեգրված տոկոսագումարների չափը», «Հաշվի համարը» և «Ժամկետանց պարտավորության ամբողջ գումարը» սյունակները:
6. «Հաշվի համարը» սյունակում լրացվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի համապատասխան հաշվի համարը, որին

կատարվել է «Վճարված պարտադիր վճարը» և (կամ) «Ժամկետանց օրերի համար վճարված տոկոսագումարների չափը» սյունակում նշված գումարների վճարումը:

7. «Ժամկետանց պարտավորության ամբողջ գումարը» սյունակում լրացվում է «Վճարման ամսաթիվը» սյունակում նշված օրվա վերջի դրությամբ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին վճարման ենթակա պարտադիր վճարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տոկոսագումարների հանրագումարը: «Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ» տողը լրացվում է միայն «Ժամկետանց պարտավորության ամբողջ գումարը» սյունակի համար, որտեղ նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին վճարման ենթակա պարտադիր վճարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տոկոսագումարների հանրագումարը: